

ՄԱՅՐԱԿԱՆ ԻՐԱԴՈՒՆՔԸ

(ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՍՈՎՈՐՈՒԹԱԿԱՆ ԻՐԱԴՈՒՆՔԻՑ)

Խ. ՍԱՄՈԵԼԵԱՆ

1

Համեմատական իրաւագիտութեան մէջ ընտանիքի գոյացման ու զարգացման վերաբերմամբ տիրապետում է ներկայումս այն կարծիքը, թէ ժամանակակից իր ամուսնական ու ազգակցական յարաբերութիւնների կազմով անհատական ընտանիքին նախընթացել էր մարդկային հանրակեցութեան սկզբնական աստիճաններում մայրական կամ ինչպէս շատերն են անւանում, մայրիշխանական, մատրիարխատական ընտանիքը: Մայրիշխանութեան էական գիծը և հասարակական գոյութեան սկզբունքը կայանում էր նրանում, որ այդ ընտանիքը չէր ընդունում ոչ մի այլ կապ, բացի այն կապից, որը գոյանում էր զաւակի, նրա մօտ և վերջինիս մայրական գէոլ ազգականների միջև: Այդ թէօրիայի արծարծումը, որ պարտական ենք զլիսաւորապէս գիտնականներ Բախօֆէնին, Մակ Լէնանին և մանաւանդ Մօրգանին, շնորհիւ բազմաթիւ ազգագրական ու պատմական փաստերի և համեմատական հետազոտութիւնների, միանգամայն պարզարանց մարդկային հանրակեցական կեանքի շատ երևոյթները, լուսարանեց նրա բնորոշ հասարակական յարաբերութիւնները: Նոյն իսկ մայրական ընտանիքի գոյութեամբ է հնարաւոր դառնում բացատրելու նահապետական գերզատանի՝ հայրիշխանական ընտանիքի, պատրիարխատի գոյութիւնն ընտանիքի զարգացման պատմութեան մէջ: Մատրիարխատի ուսումնասիրութեամբ միայն կարելի է պարզ կացուցանել հայրիշխանութեան սկզբնաւորումն, նահապետական գերզատանի էվօլյուցիօնային զարգացումը մարդկային ընտանեկան ամենահին կազմից:

Մայրիշխանութիւն, մատրիարխատ ասելով, շատերը խիստ թիւր և անհեթեթ են իրենց ներկայացնում ընտանեկան այդ հիմնարկութիւնը: Սովորաբար ազգագրական ու սոցիօլոգիական դրականութեան մէջ շփոթում են իրար այն հասկացողութիւնները,

որոնք տարբեր նշանակութիւն ունեն և զանազան հասարակական կազմերի ընդթննորին են վերաբերում: Վերը յիշեցինք, որ նախնական ընտանիքի սկզբնական աստիճաններում տիրապետում էր ազգակցութիւնը լոկ մայրական գծով: այդ ազգակցութեան աղբիւրը ներկայանում է մայրը, որ և կազմում է մայրական սերունդ իր մայրական իրաւունքներով: Մայրական սերունդը ստանում է յատուկ և ինքնուրոյն սոցիալ-տնտեսական ընաւորութիւն: Դա մի կազմ է, որը իր զարգացման բարեյաջող պայմանների շնորհիւ կարող է վերածուել մատրիարխատի՝ մայրիշխանութեան, այսինքն մի կազմակերպութեան, ուր տիրապետող դերը պատկանում է ոչ թէ մարդու, այլ կնոջ սերունդին, երբեմն նոյն իսկ միայն անձամբ կնոջը, մօրը: Այստեղից շատ ազգազրադէտներ այն եզրակացութեան են դալիս, որ մայրիշխանութիւն ասելով ներկայումս են իրենց մի կազմ, ուր բացարձակօրէն տիրապետում է լոկ կնոջ իրաւունքը. ուր ընտանիքի հրամայողն ու տէրը մայրն է: Մի խօսքով՝ մարդկային հասարակական կազմի էվօլուցիայի մէջ ընդունում են մի շրջան, ուր մարդը ստորադրեալ դիրք էր բռնած և ենթակա էր հանապաղ կնոջ միահեծան իշխանութեանը, կախումն ունէր կանանց իրաւունքից: Պատկերացնում էր սոցիալական մի կազմ, որը իրենով յիշեցնում էր Հեթոգոտի և այլ հին պատմագրների աւանդած «ամազոնների» երկիրը, կանանց իշխանութիւնը, դիւնէկօկրատիան: Սակայն որքան մինչև ցարդ յայտնի է ազգազրական հետախուզութիւնների բազմաթիւ փաստերից, այդպիսի մայրիշխանական կազմակերպութիւն գոյութիւն չի ունեցել և եթէ տեղ տեղ պատահում ենք սոցիալ-տնտեսական յաջող պայմանների շնորհիւ առաջացած այդ տեսակ մատրիարխատ կամ մայրիշխանութիւն, այնուամենայնիւ վերջինս հարկէ յարաբերական մօքթով ըմբռնել: Յիրաւի, մայրական սերունդը, որպէս ինքնուրոյն տնտեսական-սոցիալական միաւոր, և տեղ տեղ էլ մատրիարխատը բառիս նեղ նշանակութեամբ առաջանում են կանացի գծով արդէն գոյութիւն ունեցող ազգակցութեան միջնորդում: Բայց և այնպէս՝ այդ վերջին հանգամանքը չի կարելի անպայման ընդունել իրրե մի մօմենտ, որի վրայ հիմնում է ամենուրէք լոկ մայրական սերունդ իրրե առանձին սոցիալ-տնտեսական միաւոր կամ եւ առաւել մի մատրիարխատ, բառիս նեղ իմաստով մայրիշխանութիւն, որը, ինչպէս ասացինք, այնքան էլ յաճախ չի պատահում պատմութեան մէջ: Յայտնի գիտնական Դորզունը իր «Mutterrecht u. Vatterrecht» և «Mutterrecht u. Vaubehe» հետազոտական երկի մէջ մանրակրկիտ ապացուցանում է, որ մայրական սերունդը, այսինքն այն

ազգականների խմբակցութիւնը, որոնք իրենց ծագումն համարում են կանացի գծով մի ընդհանուր նահապետի կամ նախնայի զարմից, կարող է ազատօրէն ու միաժամանակ պահպանել նաև պատրիարխատին, հայրիշխանութեան կից, այն է այնպիսի հասարակական մի շրջանում, երբ հայրը իրօր անպայման իրաւունքների տէր է զաւակների նկատմամբ:

Ուստի մի կողմից՝ մայրիշխանութիւնը, իր նիզ, իսկական մտքով առած, և միւս կողմից՝ մայրական սերունդը երկու տարբեր երեոյթներ են, թէև հիմնւած միեւնոյն հոգի վրայ: Ահա ինչու աւելի յարմար ենք դատում զանազան թիւրիմացութիւններից զերծ լինելու նպատակով, այն ընտանեկան կազմը, որին յաջորգել է հայրիշխանութիւնը, այն ընտանեկան կազմը, որը ներկայումս համարւում է ազգազրական ու սոցիալական գիտութեան մէջ մարդկային ընտանեկան զարգացման ամենահին պատմական շրջանը, անւանել մի ընդհանուր անունով, առածգական բովանդակութեամբ՝ մայրական իրաւունք կամ մայրական ընտանիք: Այս գէպքում նկատի ենք աւելում ընտանեկան-հասարակական այն կազմը, ուր գերիշխում է մի հասկացողութիւն այնպիսի ազգակցութեան մասին, որի աղբիւրը մայրն է, մայրութիւնն է. ուր գերիշխում է մի իրաւաբանական աշխարհայեացք, որով հիմնաւորում են բացատապէս մօր իրաւունքները և ոչ թէ հօր իրաւունքները զաւակների վերաբերմամբ: Սա մի ընդհանուր, լայն իմաստով տերմին է, որ ընդգրկում է իր մէջ ընտանեկան կազմի զարգացման զանազան աստիճանները, որոնք հնարաւոր են մօրական իրաւունքի սահմաններում սկսած այն մօրից, որի ամբողջ հարստութիւնը կազմում է միայն իր զաւակը և վերջացնելով այն մայրով, որը իշխում է ամբողջ տան վրայ, որդիների, թոռների ու սրանց ծնող հայրերի և վերջապէս ցեղերի, սերունդների վրայ: Մայրական իրաւունք կամ մայրական ընտանիք բառերն ընդունելով, հետևում ենք հոմանիշ նշանակութիւն ունեցող Mutterrecht բառին, որ քաղաքացիութիւն է ստացել գերմանական գիտութեան մէջ և մասամբ материнтеть հոմանիշ բառին, որը գործածում է պրոֆէսոր Խարուզին¹⁾:

Ահա այս մայրական իրաւունքը տիրապետել է երբեմն նաև հայ ժողովրդի կեանքում, քանի որ նրա կուլտուրական պատմութեան մէջ, իր օրերում տակաւին, գտնում ենք հայրիշխանական ընտանիքի, նահապետական գերդաստանի ներկայութիւնը: Իսկ հայրիշխանութիւնը, ինչպէս ցոյց են տալիս սովորութեական ի-

¹⁾ Николай Харузинъ-Этнография, выпускъ II, кр. 130—131.

րաւունքների համեմատական հետազոտութիւնները, զարգացել է մայրական իրաւունքից, Չնայած, որ նահապետական գերդաստանը տրամաբանօրէն հակառակ էութիւն է պարունակում մայրական ընտանիքի հետ համեմատաբար, բայց և այնպէս զարգանալով վերջինից, իր մէջ պահպանել է հետքեր, որոնցից կարելի է եզրակացնել մայրական իրաւունքի երբեք չէ գոյութիւն ունենալը: Յիրաւի, հայի սովորութեան իրաւունքի մէջ, հայ նահապետական գերդաստանի բարձրում ու հայեացքներում կը գտնենք բազմաթիւ փաստեր, որոնցից կարելի է հետեւեցնել, թէ հայ ընտանիքի զարգացման պատմութեան մէջ և թէ հայ ժողովրդի կուլտուրական էվոլյուցիօնի մէջ եղել է մի շրջան, որը բացառապէս գերիշխում էր մայրական իրաւունքը, երբ ընտանիքը ամբողջովին հիմնուած էր մօր իրաւունքների վրայ, որոնք տարածուած էին իր գաւազներին վրայ և սահմանում էին մշտական ազգակցական կապեր լոկ կանացի, մայրական գծով:

11

Մենք վերը ասացինք, որ մայրական իրաւունքի գլխաւոր հիմքը մայրական արեւակից կապերի գիտակցութիւնն է, որին միաժամանակ յարակից է նաև հօր ֆիզիկական բացակայութիւնը, հայրականութեան անհաստատութիւնը, ոչնչութիւնը: Այս դէպքում կարող էր հարց ծագել մարդեօք, մայրական իրաւունք ասելով, նկատի ենք առնում այնպիսի հասարակական կազմ, ուր տիրապետում էր միայն սեռական խառնակեցութիւն, ամուսնական կապերի բացարձակ չգոյութիւն և վերջապէս սեռերի անկարգ յարաբերութիւններ, այսինքն մարդկային հասարակական կազմի այնպիսի շրջան, որը մի քանի գիտնականներ անւանում են հետերական (հետերիզմ), promiscuite՝ եայլն: Այսպիսի հարց բնականօրէն ծագելու էր, քանի որ, ինչպէս գիտենք, մայրական իրաւունքը ու մայրական գծի ազգակցութիւնը կարող էր գոյանալ ու ծաղկել լոկ այնպիսի իրական պայմաններում, երբ կին և այլ մարդու ամուսնական կապերը կարճատև, անցողական բնաւորութիւն էին կրում և սահմանափակած չէին միմեկին անհատների մէջ, այլ փոփոխուում, յաջորդում էին իրար օտար անձեր, ուստի և յայտնի չէր բնաւ, թէ ով էր իսկապէս զաւակի հայրը: Ծնւած զաւակներն էլ, սնւելով, մեծանալով ու կրթւելով իրենց մօր և սրբ ազգակիցների շրջանում, միմիայն իրենց մօրը և սրբ ազգականներին էին ճանաչում և անտեղեակ էին, ոչ մի գաղափար չունէին իրենց հայրերի մասին: Մայրը դառնում էր մի կենդրոն, որի շուրջն էր կազմուում, պահպանւում ընտանիքը եղբայրներով:

զաւակներով ու թոռներով. մի ընտանիք, ուր բացակայ էր միանգամայն հայր ասած բանը: Այս երեւոյթն էր պատճառը, որ ազգազրական զրականութեան մէջ բազմաթիւ թէր ու զէմ հայեացքներ ու կարծիքներ արծարծուեցին և տակաւին շարունակուեմ են արծարծուիլ մայրական ընտանիքի ծագման, զարգացման և ընդթի մասին. այդ երեւոյթն էր, որ առիթ էր տալիս շատերին ննթադրելու, որ նախնական մարդկային ընտանեկան կազմը, ինչպէս և մայրական ընտանիքը, ներկայացնում է հասարակական այնպիսի համայնակեցութիւն, ուր տիրում են միմիայն սեռական խառնակեցութիւն, ամուսնական անկարգ յարաբերութիւններ: Աւելորդ ենք համարում կանգ առնելու այդ վիճելի հարցերի վրայ, այլ ներկայ մեր աշխատութեան մէջ շեշտենք այն փաստերն ու եզրակացութիւնները, որոնք իբրեւ աւելի հաւատարմութիւն ու գիտական նշանակութիւն ունեցող ընդունած է սովորութեան իրաւունքների համեմատական ուսումնասիրութիւնը: Յամենայն զէպս չպէտք է աչքաթող անենք մի ընդհանուր երեւոյթ, որ մայրական իրաւունքը ներկայացնում է այնպիսի ընտանեկան կապեր, որոնք մշտական գոյութիւն ունեն միմիայն մօր և նրա զաւակների միջև, կապեր, ուր ոչ մի իրաւական-հասարակական նշանակութիւն չունի հօր ֆիզիքական ներկայութիւնը:

Մայրիշխանութեան, կամ ինչպէս մենք անուանեցինք, մայրական ընտանիքի, մայրական իրաւունքի բազմաթիւ փաստեր հանդիպում ենք վայրենիների, մանաւանդ Աւստրալիայի և Ամերիկայի ցեղերի ընտանեկան կազմի իրականութեան մէջ: Այդ վայրենի ցեղերի մէջ սովորութիւն է տիրում, որ նորածին զաւակը մտնում է այն համայնակեցական խմբի մէջ, որին պատկանում է նրա մայրը: Այդ իւրաքանչիւր խմբակցութեան բոլոր անդամները կրում են ընդհանուր որոշ անուն, սովորաբար որևէ կենդանու կամ բոյսի, սրը նրանց սրբազան հովանաւորողն է համարւում, «տօտեմն» է: Ահա այդ «տօտեմական» խմբակցութիւններն իրենց ամուսնական յարաբերութիւններով խիստ հետաքրքիր երեւոյթներ բացին գիտնականների առաջ: Այդ երեւոյթներից ամենազլխաւորը՝ այսպէս անուանած այլացող ամուսնութիւնն (էքսօգամի) և համընտանի ամուսնութիւնն (էնդօգամի) է:

Առաջինը ներկայացնում է այնպիսի մի իրաւաբանական հիմնարկութիւն, որով խստիւ արգելւում է փոխադարձ սեռական, ամուսնական յարաբերութիւնների մէջ մտնել միեւնոյն սոցիալական խմբակցութեան, մի տօտեմական խմբի բազկացուցիչ անդամներին, որոնք կրում են մի առանձնայատուկ անուն և իրենց իսկական կամ կարծեցեալ ազգակցութեան որոշ նշանը: Ընդհակա-

ուսկն այդ խմբի անդամները կարող են ամուսնական յարաբերութիւնների մէջ մտնել օտար մի խմբակցութեան, ուրիշ տօտեմին պատկանող անձերի հետ: Երկրորդ՝ համընտանի ամուսնութիւնը թոյլատրում է, որ մի սոցիալական խմբակին, միեւնոյն տօտեմին պատկանողները ամուսնական յարաբերութիւններով կապուեն միմիայն իրար հետ և ընդհանառակն խստիւ արգելում է ամուսնական յարաբերութիւնների մէջ մտնել օտար խմբակների հետ: Այս տեսակ ընտանեկան-ամուսնական յարաբերութիւնները մեզ պարզ կացութեանիւ համար առաջ բերենք ազգազրական մեծաքանակ փաստերից մի հետաքրքիր օրինակ:

Հարաւային Աւստրալիայի Յամբլտօրի ցեղը բաժանուած է ընդամենը երկու խմբակցութեան, որոնք իրենց սոցիալական կազմով յիշեցնում են սերունդները, կլանը կամ հոգովմէական gens-ը: Այդ երկու խմբակցութիւններից մէկը կոչւում է Կոմիտ, իսկ միւսը՝ Կրօկի: Թէ այս և թէ այն իւրաքանչիւր խմբակը բաղկացած է այր և կին մարդերից, որոնց խստիւ արգելուած է իրար հետ ամուսնական յարաբերութիւններ ունենալ: Ուրեմն այդ երկու խմբակցութիւններն այլացեղ ամուսնական են: Կոմմիտ խմբակցութեան իւրաքանչիւր այր մարդը համարւում է Կրօկի խմբակի ամեն մի կին մարդու ամուսին և ընդմեծին Կրօկի խմբակցութեան իւրաքանչիւր այր մարդը՝ Կոմմիտի ամեն մի կնոջ ամուսին: Զաւակը, որ ծնում է Կրօկի խմբակցութեան կինը Կոմմիտի այր մարդկանց հետ յարաբերութիւն ունենալուց, մտնում է իր մօր խմբակի մէջ, պատկանում է Կրօկի խմբակին, իսկ այն զաւակը, որ աշխարհ է եկել Կոմմիտի որևէ կնոջ յարաբերութիւնից Կրօկիի այր մարդկանց հետ, պատկանում է Կոմմիտի խմբակին: Իւրաքանչիւր երեխան ստանում է իր մօր ազգանունը և դառնում է նոյն խմբակցութեան անդամ: Այդ երկու խմբակները չեն ապրում իրարից բաժանուած, առանձին տներրիտորիանների վրայ, այլ միեւնոյն գիւղակներում, ընակատեղիքում, որոնք ցրուած են հազարաւոր մղոնների տարածութեամբ¹⁾: Այդ հանգամանքներում միանգամայն ընական է, որ երկու խմբակցութիւնների այր ու կին մարդերի մէջ անցողական, կարճատև ամուսնական յարաբերութիւններ են հնարաւոր. չէ՞ որ ամեն մի Կրօկի այր մարդը համարւում է ամուսին իւրաքանչիւր Կոմմիտի կնոջ և ընդհանառակն իւրաքանչիւր Կոմմիտի տղամարդը ամեն մի Կրօկի կնոջ ամուսին: Այստեղ այր մարդիկ ամուսնանալիս

¹⁾ М. Ковалевский—Происхождение семьи и собственности, стр. 20.

կանանց չեն բերում իրենց տուն, իրենց խմբակի մէջ, այլ իրենք են դնում կանանց տունը, սրանց ընտանիքը, ուր մտնում են ամուսնական յարաբերութիւնների մէջ և ապա վերստին հետանում են: Հետևապէս քանի որ ամուսնութիւնը մայրական ընտանիքի շրջանում գոյութիւն ունի այնպիսի ձևով, որ մի խմբակցութեան կամ սերնդի այդ մարդը համարւում է միւս խմբակի կնոջ ամուսին և ընդհանառակն, ուրեմն և կարելի է եղբակացնել, որ այդ շրջանում ամուսնական յարաբերութիւնները, կապերը տեղի են ունենում ոչ թէ առանձին անհատների, այլ ամբողջ խմբակների, սերունդների միջև. ամուսնութիւնները կրում են լոկ խմբակցական բնաւորութիւն:

Միանգամայն հակապատկեր է ներկայացնում համընտանի ամուսնութիւնը, ուր բացարձակօրէն արգելուած է դրսի, այլացեղ ամուսնական յարաբերութիւններ և ուր իւրաքանչիւր այդ մարդ համարւում է իր ցեղակից, սերնդակից կնոջ ամուսին և ըստ այնմ էլ իրաւունք է ունենում ամուսնական յարաբերութիւնների մէջ մտնելու նրանց իւրաքանչիւրի հետ: Այստեղ էլ ուրեմն ամուսնութիւնը զուտ խմբակցական բնաւորութիւն ունի, բայց միայն այն տարբերութեամբ, որ ինքնամփոփ, ինքն իր մէջ պարփակուած կազմով Պէտք է նկատենք, որ զուտ էնդոգամիական խմբակցութիւններ համեմատաբար սակաւաթիւ են պատահում:

Ահա ամուսնական յարաբերութիւնների այս առանձնայատուկ ձևերը, որոնք գոյութիւն ունեն տակաւին բազմաթիւ ժամանակակից վայրերի ցեղերի մէջ, առաջին հայեացքից շատ ազգագրագէտների ու ճանապարհորդների վրայ թողել են այն տրպաւորութիւնը, թէ ամուսնութիւնները այդտեղ խառնակեաց, անկարգ ընոյթ ունեն, թէ բացակայում են ամուսնական յարաբերութիւնների որևէ իրաւական նօրմեր: Նոյնն էին նաև հին պատմիչների տեղեկութիւնները իրենց ժամանակակից ժողովուրդների ամուսնական-ընտանեկան կարգերի մասին: Սակայն միայն վերջին ժամանակները շնորհիւ մի քանի լուրջ ըննադատութիւնների և հետախուզումների, ինչպէս Մօրգանի, Մակ Լէնանի և այլն, պարզուեց, որ առաջին հայեացքից այդ սեռական խառնակցութիւն, անկարգ ամուսնական կապեր թուացող յարաբերութիւնները, իրօք ներկայացնում են որոշ կրօնական-իրաւական նօրմերով կարգաւորուած ամուսնական յարաբերութիւններ, որոնք կազմում են մայրական ընտանիքի, մայրական իրաւունքի հիմքը: Ոչ թէ հետերիզմ, ինչպէս կարծում և անողանում էին այդ երևոյթը մի քանի գիտնականներ, ոչ թէ պոռնկակա-

նութիւն, այլ որոշ հասարակական-ընտանեկան կազմի զարգացման աստիճանն էր դա իր առանձնայատուկ սոցիալ-կուլտուրական պայմաններում ծաղկեցւոյն և անհրաժեշտ...

III

Դառնալով հայ սովորութեան իրաւունքին և հին պատմական փաստերին, կընկատենք, որ հայ ժողովրդի ընտանիքի զարգացման պատմութեան մէջ գոյութիւն է ունեցել մի շրջան, ուր տիրում էին մայրական իրաւունքներ, տարածւում էր մայրական սերնդի հասարակական գերիշխանութիւնը: Ծիշտ է, այդ փաստերից շատերը մեզ չեն տալիս ուղղակի ու անմիջական ապացոյցները, սակայն այդ փաստերի համեմատական վերլուծումը և պատմական քննութիւնը մի առ մի մեր աչքերի առաջ բաց են անում հայ իրականութեան ալեուր հնութեան մէջ երբեմն գոյութիւն ունեցող մայրական իրաւունքների, մայրական ընտանիքի բազմաթիւ հետքեր ու բեկորներ:

Այսպէս է նաև այլացեղ և համընտանի ամուսնական կապերի գոյութեան հարցը հայկական պատմութեան վերաբերմամբ: Այդ հարցի ապացուցման համար մեր գրականութեան մէջ տակաւին բացակայում են անմիջական փաստեր: Բայց կան այնպիսի պատմական տեղեկութիւններ, որոնք առիթ են տալիս ենթադրելու, թէ արդեօք այդ փաստերը մեզ հաղորդող պատմագիրները նոյնպէս չեն սխալւել և հայ ժողովրդի մէջ իրենց տեսած ամուսնական կարճատև անցողակի յարաբերութիւնները առաջին հայեացքից չեն ընդունել սեռական խառնակեցութեան, ամուսնական անկարգութեան երևոյթներ, ինչպէս դա երբեմն պատահել էր անցեալ դարու այն հետազոտողների ու ճանապարհորդների հետ, որոնք նկարագրել էին Ամերիկայի, Աւստրալիայի, Աֆրիկայի վայրերի ցեղերի ընտանեկան—ամուսնական կազմը:

Հին պատմագիր Ստրաբոնը իր «Աշխարհագրութեան» XI գրքի 19-րդ գլխում իբրև փաստ պատմում է. «Հայերը իրենց երկրի զանազան տեղերում հիմնած ունեն մեհնաններ ի պատիւ Անահիտ դիւցուհու և մանաւանդ հռչակաւոր էր այդ աստուածուհու մեհնանը Աֆիլիսինէում¹⁾»: Այդ մեհնանում գտնւում են ոչ միայն երկու սեռի անձեր, որոնք իրենց նուիրել են դիւցուհու սպասաւորութեանը, այլ և անուանի ընտանիքներ իրենց զուտւորները նուիրում են այդ դիւցուհուն: Այդ երկրի օրէնքով աղջիկ-

¹⁾ Հայ պատմագրների «Եկեղեցաց» գաւառն է:

ները կարող էին ամուսնանալ ոչ այլապէս, եթէ ոչ միայն երկաբատե պոռնկութիւնից յետոյ, որին նրանք անձնատուր էին լինում Անահտի տաճարում, և վերջապէս ոչ ոք էլ չէր հրաժարուում կնութեան առնելու այգալիսիններին ¹⁾։

Աւելորդ չի լինիլ այստեղ յիշատակելու, որ նոյնանման երեւոյթներ, ինչպէս տեսնում ենք օտարազգի հին պատմագիրների աւանդութիւններից, գոյութիւն ունէին նաև Փոքր-Ասիայի շատ ազգերի մէջ, Հերոդոտը պատմում է Լիւդիացիների մասին, որ նրանց աղջիկները մինչև ամուսնանալը ազատ սեռական յարաբերութիւնների մէջ էին մտնում օտար տղամարդկանց հետ և այդ եղանակով կազմում էին իրենց օժիտը։ Այսպիսի սովորութիւն կար նաև հին եգիպտացիների մէջ, նմանապէս հին յոյների մէջ, որոնք ապրում էին Միջերկրական ծովափի գաղթավայրերում և ուրևն մօտ էին Փոքր-Ասիային։ Զորօրինակ, յիշում է Լէսբոս կղզին, ուր յոյն կոյսերն և նորատի կանայք նուիրում էին իրենց անձը Աֆրօդիտէ դիւցուհուն և սրա տաճարում անձնատուր էին լինում օտար տղամարդկանց. այդ կղզում յիշեալ դիւցուհու տօնին տեղի էին ունենում օրդիաներ ու նման կրօնական խրախճանքներ, երբ կատարւում էին այդ սովորութիւնները՝ կրօնական պոռնկութեան, հետերիզմի էքսցէսները։

Զարմանալի է, որ հայ պատմագրները ոչինչ չեն յայտնում մեզ Անահտի պաշտամունքի վերաբերեալ Ստրաբոնի աւանդած կրօնական հետերիզմի մասին։ Մեր կարծիքով այդ լուսթիւնը բացատրելի է հետեւեալ ենթադրութեամբ։ Հայ ամենահին պատմագիրներից մի քանիսը, ինչպէս օրինակ Ագաթանգեղոս կոչուած անյայտ հեղինակը, որ իբր ակնատես ըազմաթիւ տեղեկութիւններ է մեզ հաղորդում հին հայոց հեթանոսական կրօնի ու հաւատալիքների մասին, գրում էր ըստ իր վկայութեան մօտաւորապէս IV դարում, երբ անշուշտ վերոյիշեալ սովորութիւնն այլ ևս չէր կրում իր նախկին կրօնական բնոյթը։ Շատ հաւանական է, որ հեթանոսական տօներին ի յիշատակ Անահտի ըստ տրագիցիաների և ժողովրդի աւանդապահութեան նրա տաճարում կամ մեհեանի գաւթում տեղի էին ունենում օրդիաներ, կրօնական խրախճանքներ, երբ ուխտաւոր բազմութիւնը գինու շքիւնների ու անզուսպ մոլութեան ներքոյ կարող էր անձնատուր լինել վաղեմի յիշատակներից մնացած ազատ սեռական յարաբերութիւնների և անառակութեան, որոնք արդէն կորցրել էին իրենց նախնի ու իսկական կրօնական նշանակութիւնը, ծխական բնա-

¹⁾ Strabo, XI, 532 c.

ւորութիւնը մեր անտեղեակ պատմագրներէ աչքերուս: Միւս կողմից, եթէ նոյն իսկ ժողովրդական աւանդութիւնների ու հաւատալիքների մէջ պահպանուել կամ մնացել էին կրօնական հետեւիքի որեւէ հետքեր, վերոյիշեալ դարերը սովորութեան նշոյլներ, այն ժամանակ հայ պատմագրները, ինչպէս սովորաբար արել էին հին հայկական կեանքի բազմաթիւ հետաքրքիր երևոյթների նըկատմամբ, դիտաւորեալ պահպանել են լուսթիւն: Երևի քրիստոնէական կրօնի առաջ ակնածելով և բարոյական զգացմունքից վիրաւորուած, գուցէ և ազգային ամօթխածութիւամբ ու պատուասիրութեամբ դրդուած, այդ պատմագիրները լռելեայն էին անցել իրենց կարծիքով այդ խայտառակ և անամօթ փաստերի վրայով, որ կատարուում էին նրանց հայրենիքում, ազգակից ժողովրդի մէջ, որին կոչուած էին քրիստոնէութեան դարձնելու: Սակայն անհրաժեշտ է մատնանշել մի այլ ընդոշ փաստ: Նոյն այդ հայ պատմագրները, որոնք այնպէս լռում էին Անահտի պաշտամունքի հետ կապուած կրօնական հետեւիքի մասին, աւանդում են, որ Գրիգոր Լուսաւորիչը Եկեղեցաց զաւառում (այսինքն ըստ Ստրաբոնի համանուն Աքիլոնէում) Անահտի մեհեանի տեղը հիմնեց տաճար Յովհաննէս Մկրտչի անունով: Վերջինս մի սուրբ էր, որը քրիստոնէական ռամկական աւանդութեան համեմատ մի կնոջ դասերի (Հերովդիատայի) շնորհիւ գլխատուած լինելով, հանդիսանում է կանանց սեռի թշնամի, կնոջ անիծող ու հակառակ մի սրբութիւն: Եւ ահա այդ տեսակ սրբի անուան նուիրելով նոր տաճարը Գր. Լուսաւորիչը իբր օրէնք է դարձրել, որ ոչ մի կին իրաւունք չունէր ուրք դնելու այդ տաճարը, մի օրէնք, որը ամենայն խնստութեամբ պահուել ու կատարուել է պատմական ժամանակները և հասել է, որքան տեղեկացանք, նոյն իսկ մինչև մեր օրերը: Հայ պատմագիր Յովհան Մամիկոնեանը աւանդում է, թէ ինչպէս Մուշեղ Մամիկոնեանի իշխանութեան ժամանակը սորա ղուստը՝ Վարդ Պատրիկի, Արծրունեաց իշխանի, կինը շատ ցանկանում էր և ուխտել էր հակառակ տիրող սովորութեանը, անպատճառ մտնել աղօթելու և երկրպագելու ս. Կարապետի վանքը, այսինքն այն վանքը, որ հիմնուել էր Անահտի մեհեանի տեղը, մի տեղ, որը, ինչպէս յայտնի է պատմութիւնից, հայոց հեթանոսական կրօնի ու պանթէօնի գլխաւոր սրբավայրն էր ու ժողովրդի ուխտազնացութեան կենտրոնը: Վերոյիշեալ տիկինը քանիցս դիմում է ս. Կարապետի վանահայրին՝ Թողիկին, որ սա թոյլատրի նրան ի կատար ածելու իր ուխտն ու իղձը, բայց միշտ մերժում էր ստանում: Տիկինը ճշմնեալ ջաղում անուշահոտ խունկն տայր սպասաւորացն, և գանձա բազումս ի սպաս սրբոյ

եկեղեցւոյն՝ Եւ պատգամս յղէր առ հայրն Թողիկ, զի առեալ զիրան՝ և զնա թողցէ ի ներսս Եւ նա ասէ. ոչ, զայդ հրաման առեալ եմք յառաջնոցն, և ոչ իշխեմք առնել. արդ եթէ վասն հաւատոց ես, ընդունելի է քեզ այդ աշխատանքդ: Եւ տիկինը ի միջի այլոց սրան առարկում է. «Իսկ եթէ վասն Զշնամութեան կարօտեալն ընդ մեզ, և թէ ինքն ի կնոջէ ծնուաւ... Եւ չնայած այդ արգելքին՝ տիկինը այնուամենայնիւ իրենն է անում. մտնում է եկեղեցի. ոտք է դնում այն շէմքը, ուր մինչև այդ ոչ մի կնոջ ոտք չէր անցել և աղօթում. Եւ երբ դուրս է գալիս եկեղեցւոյ, աւանդութիւնը պատմում է, որ բարկացած սուրբը նրան պատժում է չարաշար: Տուն վերադառնալիս թեոսն կինն ի հիւսիսահան կողմանէն տեսութիւն զարմանալի. և ընկեց զմանուկն ի դայեակն և ասէ. Տեսանեմ այր մի գիսաւոր ընդ ամպս որոտացեալ, և ելեալ յեկեղեցւոյն դայ առ իս. տեսանեմ առ նա սուր սրեալ և թացուցեալ և յարեան ներկեալ: Եւ ընդ բանսն հհար զնա, և անդէն սատակեցաւ»¹⁾:

Մենք դիտմամբ երկարօրէն կանգ առանք այս փաստի վրայ, որպէս զի տեսնենք թէ ինչ մեծ նշանակութիւն ունէր հայ ժողովրդի հաւատալիքների ու սնապաշտութիւնների մէջ մեր առաջին լուսաւորիչների այդ սահմանած արգելումն և ինչ խտուրթեամբ էին հետևում այդ օրէնքի անխախտ պահպանելուն: Ինչո՞վ բացատրել այդ տեսակ արգելումն և ինչով բացատրել տաճարի հիմնումն այդ տեսակ սրբի անունով: Տրամաբանօրէն կարելի է եզրակացնել, որ յիրաւի այդ ձևի խիստ միջոցներով միայն քրիստոնէութեան հայ լուսաւորիչները հնարաւորութիւն ունէին հին-շայաստանում կուռել հեթանոսական բարքերի, սովորութիւնների ու հաւատալիքների դէմ: Այդ խիստ միջոցներով միայն նրանք կարող էին արմատախիլ անել այն օրգիաներն ու վախկանալիաները, իբրև կրօնական հետերիզմի յարակից երևոյթներ, որոնք, Անահտի հին հեթանոսական պաշտամունքի սովորութիւնների փացորդներ լինելով, տակաւին շարունակում էին տեղի ունենալ նրա մեհեանի պատերի մէջ, երբ կանայք անսանձօրէն անձնատուր էին լինում մարդկանց ի պատիւ դիւցուհուն: Կարող է մեհեանը քանդուել, նոր քրիստոնէական տաճար կառուցուել նրա տեղը, սակայն ժողովրդական դարևոր կրօնական սնապաշտութիւնները, աւանդութիւնները մի անգամից չէին կարող արմատախիլ լինել, վերացուել: Ռամկական հայեացքների մէջ, նոյն իսկ

¹⁾ Յովհաննու Մամիկոնեանի Պատմութիւն Տարօնոյ. Վենետիկ, 1832 թ. եր. 10—11:

քրիստոնէական վարդապետութեան քարոզներին ներքոյ, պահպանուած էին նախկին կրօնական հեթանոսական հաւատալիքները, որոնք այսպէս կամ այնպէս մտնում են, հակառակ բոլոր քրիստոնեայ լուսաւորիչների կամքին, նոր ընդունած քրիստոնէական հասկացողութեան մէջ։ Եւ ժողովրդի հեթանոսական այդ հաւատի ոյժն էր, որ մեր լուսաւորիչներին զրգել էր հաշուի առնել և նոյն սրբաւայրերում, ուր մի ժամանակ Անահտի, հին-Հայաստանի տոալի այդ դիցունու կուլտն էր թաղաւորում, հիմնել մի եկեղեցի։ Բայց որովհետեւ այդ նորա հաստատ եկեղեցու շուրջը ժողովուրդը տօնական հանդէսներին ըստ աւանդութեան կարող էր վերստին շարունակել իր օրդիւաները, ուստի յարմար էին սեպել այնպիսի միջոցներ գտնել, որ ոչ մի կին չհամարձակուէր այդտեղ այլ ևս ոտք դնել։ Եւ ահա այդ նպատակով ստեղծւում է մի լեզենդա Յովհաննէս Մկրտչի մասին, իբրև կանանց թշնամի ու հակառակ մի սրբի, և նրա անունով էլ օծում են եկեղեցին և Կարապետ, ուր մինչև օրս պահպանւում է այդ աւանդական արգելումն կանանց վերաբերմամբ։ Իսկ ժողովրդական տօներն, որոնք կցորդուած էին Անահիտի անուան, շարունակւում էին այլ ևս կատարուել և Կարապետի անուան հետ կապուած, տօներ, որոնք մինչև օրս էլ տողորուած են տակաւին իրենց նախկին հեթանոսական ոգու մնացորդներով, ինչպէս օրինակ՝ Վարդապառը։ Ուրեմն ջնայած հայ պատմագրների խորհրդաւոր լուսթեանը, մենք այնուամենայնիւ հիմքեր ունենք եզրակացնելու, որ հին Հայաստանում գոյութիւն ունէր կրօնական հետերիզմը։ Սակայն ինչ կապ ունի կրօնական հետերիզմը մայրական իրաւունքի հետ։ Արդէն վերը յիշած էինք, որ մայրական իրաւունքի շրջանում ամուսնական յարաբերութիւնները զուտ խմբակցական բնոյթ են կրում, որոնք և առաջին հայեացքից առիթ էին տուել զանազան ճանապարհորդներին ու ազգագրագէտներին ենթադրելու ամուսնական կապերի անկարգութեան, սեռական խառնակեցութեան՝ հետերիզմի մասին։ Նոյնն է և այստեղ, Անահիտ դիցունու շուրջ գոյութիւն ունեցող կրօնական հետերիզմի հետ։ Անահիտ և ընդհանրապէս զանազան աստուածուհիների կուլտի հետ կապուած այն հաւատալիքները, որոնց հիման վրայ կոյս աղջիկները ու նորատի կանայք անձնատուր էին լինում տաճարների մէջ պատահական ու օտար այր մարդկանց, ուրիշ ոչինչ են, եթէ ոչ երբեմն գոյութիւն ունեցող խմբակցական ամուսնութեան մեղմող, անհետացող ձևերը։ Դրանք այն ձևերն են, որոնք մնացորդներ են նախկին այն ամուսնական յարաբերութիւնների ու կապերի, որոնք տիրապետում էին հասարակական-ընտանեկան զարգացման մայ-

րական իրաւունքների շրջանում: Կրօնական հետերիզմի ձեերը փոխանցական շրջանի մթնոլորդումն են գոյանում, երբ խմբակցական ամուսնութիւնների ինտիմութեւնը սկսում է քայքայուել, սահմանափակուել, և սոցիալ-տնտեսական նոր պայմանների ներքոյ ամուսնական յարաբերութիւնները սկսում են աւելի տեղական ընդթ ստանալ, աստիճանաբար պարփակուել զերդաստանական միութիւնների մէջ կնոջ և մարդու մշտական կենսացութեամբ: Այս հանգամանքներում, թէև վերանում են իրականօրէն գոյութիւն ունեցող նախկին խմբակցական ամուսնական յարաբերութիւնները, բայց իրաւաբանօրէն շարունակում է մի առ ժամանակ իր գոյութիւնը պահպանել այդ յարաբերութիւնների հասկացողութիւնը, թէ մի խմբակի բոլոր կանայք համարում են միւս խմբակի այդ մարդկանց ամուսիններ: Եւ այդ հասկացողութիւնը՝ թէ մի խմբակի կանայք պատկանում են միւս խմբակի այդ մարդկանց, արտայայտում է այնուհետև այն պարտաւորեցուցիչ սովորութեան մէջ, թէ կոյսերը և նորատի կանայք նախ քան ամուսնանալը մի մարդու հետ, նախ քան վերջինիս հետ մի մշտական ընտանեկան զոյգ կազմելը պէտք է անձնատուր լինեն այդ մարդկանց, ինչպէս առաջ: Ահա այստեղ առաջ է գալիս կրօնական աշխարհայեացքը, որի հովանաւորութեան ներքոյ է կատարւում այդ նախքան ամուսնական սեռական ազատ յարաբերութիւնները: այդ վերջին տեսակի յարաբերութիւնները սերտազործւում են իբրև զոհաբերութիւններ, որոնք անւում են կանանց կողմից և մանաւանդ կոյս աղջիկների կողմից Անահիտ և կամ սրա նման դիցուհիների անուանը:

Այսպիսով մայրական իրաւունքների շրջանի խմբակցական ամուսնութեան մնացորդը վերածւում է մի սովորութեան, որը դիտնականները անուանում են կրօնական հետերիզմ, այսինքն մի սովորութիւն, ուր կինը նախքան ամուսնանալը անպայման պիտի պռոնկանայ, անձնատուր լինի օտար այդ մարդկանց. մի իրաւական սովորութիւն, որ պաշտպանւում, հովանաւորւում է կրօնական հաւատալիքներով:

IV

Այլացիկ ամուսնութեան սերտ յարակից է այսպէս կոչւած հիւրասիրական հետերիզմը: Երբ տիրապետում են խմբակցական ամուսնութիւնների յարաբերութիւններ, ակնբեր է, որ իւրաքանչիւր խմբակի այդ մարդը, համարելով միւս խմբակի կանանց ամուսին, միշտ իրաւունք ունի գնալ և սեռական յարաբերութիւնների մէջ մտնել այդ խմբակի կանանց՝ իր ամուսինների հետ: Այս հանգա-

մանքից ժամանակի ընթացքում առաջ եկաւ այն սովորութիւնը, որ իւրաքանչիւր աղամարդ, որ հիւր էր գալիս կամ դիպուածով այցելում էր որեւէ այլացեղ մի ընտանիք՝ միանգամայն առանց ամուսնական միտումների, գիշերում էր այդտեղ, այն ժամանակ նրան հիւրասիրում էին, նրա տրամադրութեան տակ էին դնում ընտանիքի որեւէ կինը: Ահա այդ սովորութիւնից զարգացաւ հիւրասիրական հետերիզմը: Այդ հետերիկանութիւնը իր սկզբնական քայլերում ընաւ չէր կրում անկարգ սեռական կենսակցութեան ընդթ, որովհետեւ հիւրի ժամանակաւոր յարաբերութիւնը կնոջ հետ թոյլատրելի էր միայն այն դէպքում, եթէ դա չէր հակասում և դէմ չէր այլացեղական սովորոյթի առաջացրած արգելքներին: Իսկ յետագայում հիւրասիրական հետերիզմը կորցնում է իր սկզբնական նշանակութիւնը և դառնում է մի երևոյթ, որ մինչև օրս էլ կատարւում է շատ ժողովրդների մէջ, թէ՛ Ասիայում և թէ՛ Աֆրիկայում, ուր նա ստացել է որոշ կրօնա-քարոյական հասկացողութիւն: Հիւրը շատ ժողովրդների մէջ, որոնց հաւատալիքները սողորուած են ընական ֆէտիշիզմով, համարւում է օրրազան անձնաւորութիւն, որին պէտք է պատուել ամեն կերպ: Հիւրը գտնւում էր յատուկ աստուածների հովանաւորութեան ներքոյ: Այդ հայեացքը անցել էր նաև քրիստոնէական ժողովրդների մէջ, որոնց հաւատալիքները, ինչպէս և հայերիս մէջ, իւրաքանչիւր հիւրին, օթեան, ապաստան հայցող ճանապարհորդին տալնշականին համարւում էին «Աստծոյ հիւր», դնում էին Աստծոյ հովանաւորութեան տակ: Ահա այս հանգամանքներում հիւրասիրական հետերիզմը, որի էութիւնը ընդորոշեցինք այլացեղ ամուսնական յարաբերութիւնների նկատմամբ, ստանում է յատուկ կրօնական հաւատալիքի, սնոտիապաշտութեան ընդթ: Ռուսաստանում կօրիսկ և չուքչի կոչուած ժողովրդների մէջ սովորութիւն կայ, որ տանտէրը իր մօտ գիշերող իւրաքանչիւր հիւրին պարտաւոր է մատուցանել իր կինը կամ աղջիկը. և նա կարող է իրեն վիրաւորուած համարել, եթէ հիւրը չընդունի այդ տեսակ մեծարանքը:

Հիւրասիրական հետերիզմը իր իսկութեամբ, իր բնաւ ձևով ի հարկէ այլևս զոյութիւն չունի հայերի մէջ: Սակայն հայկական սովորութիւնների մէջ պահպանուել է մի երևոյթ, որը այդ հետերիզմի ֆնացորդն է և իր ներկայ այլափոխուած ձևի մէջ պարփակում է նոյն գաղափարը: Սովորութեական-իրաւական ձևերը կարող են հասարակական կուլտուրական զարգացման հետ կորցնել իրենց էական գծերը, արտաքին ընդթը, բայց նրանց մէջ թաղնուած գաղափարը, նշանակութիւնը դեռ ևս պահպանում է

դարերի ընթացքում իր գոյութիւնը իրականութեան մէջ այլ կե-
ղեով, ուրիշ արտաքինով, սոցիալական նոր պայմաններին հա-
մապատասխան բարեփոխուած արտայայտումով, Հիւրասիրական
հետերիզմի գաղափարի մնացորդը գտնուած ենք այն համատարած
սովորութեան մէջ, որ մինչև վերջին ժամանակները կարելի էր
հանդիպել հայ գիւղերում և խուլ գաւառական անկիւններում,
դա հիւրի օտքը լուսնալու սովորութիւնն է:

Անկասկած ամենքիս յայտնի է հայ նահապետական գերդաս-
տանի հիւրասիրութեան սովորութիւնը և վերջինիս հետ կա-
պուած ուսմական հաւատալիքների հայեացքը ¹⁾։ Այդ սովորու-
թիւնը մինչ վերջին ժամանակները պահպանուած էր ամենայն
սրբութեամբ ու անյողողղութեամբ, քանի որ գոյութիւն ունէր
հայ նահապետական գերդաստանը, և տակաւին պահպանուած է
նաև յետ ընկած շատ հայ գիւղերում արդի անհատական ընտա-
նեկան կազմի մէջ։ Երբ այդ նահապետական գերդաստաններում
եղեւում էր մի հիւր կամ ճանապարհորդ ամենակրտսեր, ջահել
հարսը պարտաւոր էր իսկոյն ջուր տաքացնել և ապա մերկացնել
հիւրի ոտները և լուսնալ այդ ջրով. գիշերն էլ նա պարտական
էր նոյնպէս հիւրի համար տեղաշոր ու անկողին փռել, նոյն իւր
իր ձեռքով նրան հանուեցնել ու պառկեցնել։ Այդ բոլորը կո-
տարուած է խորին ակնածութեամբ, խորհրդաւոր պատրաստակա-
մութեամբ, լուռ և մուռն, առանց մի բառ արտասանելու։ Եւ
հիւրը իրաւունք չունի հրաժարուելու հարսի այդ բոլոր ծառայու-
թիւններից, հակառակ դէպքում նա զբանով վիրաւորած կըլի-
նի տանտէրին ²⁾։ Զարմանալի ու բնորոշ չէ՞ արդեօք այս փաս-
տը. այն չխօսկան հարսը, որ իրաւունք չունի օտար տղամարդու
առաջ երևալ, նրան շօշափել, նրա վրայ նայել, այս դէպքում նա
շատ անգամ առանձնացած օգայում հիւրի հետ միայնակ է լի-
նում, նրան հանուեցնելիս շօշափում է։ Այս երևոյթի առանձնա-
յատուկ գծերը միանգամայն հասկանալի կը լինեն, երբ մեզ
պատկերացնենք այն էփօլիցիօնը, որին ենթարկուել է հիւրա-
սիրական հետերիզմը սկսած նախնական հասարակական կուլտու-
րական պայմաններից մինչև մեր օրերը, երբ արդէն այդ հետե-
րիզմի գաղափարը ժողովրդի աշխարհայեացքում ստանում է ար-
տաքուստ միանգամայն ուրիշ բնաւորութիւն, ծառայում է այր

¹⁾ Տես մեր «Հայ ընտանեկան պաշտամունքը»—Ազգագրա-
կան Հանդէս, հատ. XIV, էր. 167.

²⁾ Haxsthausen—Reiserrinerungen in Transkaukasien, էր. 215.

նպատակների, Հարսի ձեռքով հիւրի ոտք լուանալու և հիւրին հանուեցնելու, պառկեցնելու սովորութեան մէջ նոյն էութիւնն է է պարփակուած, ինչ որ կայ չուքչի կամ կօրիսկի կողմից իր կիներ կամ աղջիկը հիւրին առաջարկելու սովորութեան մէջ: Սակայն այս երկու դէպքումն էլ միևնոյն սովորութիւնը կատարւում է այլ ձևով, այլ եղանակով, որոնք համապատասխանում են տարբեր սոցիալ-կուլտուրական աստիճանների վրայ կանգնած, էվօլյուցիօնական զարգացման տարբեր շրջանների հասած երկու ժողովրդների աշխարհայեացքների միջև:

(Գը շարունակով)

